

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Revue des deux mondes.

Նորելս ինչպէս հաղորդեցին լրագըրեր, Փրանսիական կտորաբառն թիւնը Պատւայ լէզէօնի շքանշանը չնորհնց մի ֆրանսուհու տիկին Կոլիէն: Սա այն կինն է, որ 1895 թվի հայկական սարսափների ժամանակ Սերաստիայում իր ամուսնու՝ Փրանսիական հիւպատուսի հետ իր կեանքը բազմաթիւ գտանդների ենթարկելով, աշխատել է անել, ինչ որ նաևաւոր է թիւքրական գաղանութիւններից անմեղ զոհերին փրոկելու համար: Արեասիրա ու բարի կընօջ այդ անձնութիւնն էր, որ Փրանսիական կտորաբառն թիւնը վարձարեց շքանշանով:

Revue des deux mondes ի այս տարրուայ յունուարի 15 Ն.-ում տիկին Կոլիէն հրատարակել է այն սարսափի լիշտութիւնները Ել Արտենի (Հայաստանում) վերնագրով: Մարդասէր տիկինը այս յիշողութիւններն են, որ մենք պէտք համարեցինք թարգմանաբար տալ «Մուրճի» ընթերցողներին:

1895 թ. օգոստոս. (ամարանոցում)

«...Մօրիսը ենթադրում է, որ լորջ դէքսեր են տեղի ունենալու մեղմ եղանակներին (saisondouce): Թիւքրերը, յայտնի յափշտակիչներ, տարառութիւններն սկսում են միայն լաւ եղանակներին, երբ ոչ շատ տաք է, ոչ շատ ցուրտ:

Մեր ամարանոցը գտնուում է Սե-

րաստիալից 5 կիլոմետր հեռու Ղըզըլ-իրմաք լրվէժի մօտ, որ բանացնում է մի հայկական ջրաղաց, որ պատկանում է սակայն մի փաշայի և այս պատճառ-ճառով կոչում է Թիփֆաք փաշայի ջրաղաց:

17 Օգոստ. Խոհարաբն այսօր մեզ բերեց վատ լուրեր: Դուքս է զալիս, որ Վանի կողմերում, ուր Փրանսիական հիւպատոս ըլ կայ, շատ քրիստոնեաններ են կոտորել: Միթէ ճշ-մարիտ է: Ըսկելքում չափազանցում են. սակայն մթնողորդի մէջ մի բան կայ...

Մերաստիայամ մենք արդէն առիթ ունեցանք տեսնելու մի շփոթութիւն: Վերջին ամսում, երբ ես այստեղ մե-նակ էի սենեակումս, փոքրիկս է զնացել էր զրօսանկի, յանկարծ լուսում եմ ամբոխի մոմոռոց, նայում եմ և տեսնում բազմաթիւ հայեր, որոնք վա-զում են: Հարցնում եմ պատճառը, նրանք ինձ պատասխանում են, թէ գնում են եպիսկոպոսին (լուսաւորչա-կան) խնդրելու, որ նա պաշտպանէ քա-դարական բանտարկեալներին, որոնց զափթիւնները ծեծով կիսամահ են արել:

Ցանկարծ լսում են սուր ճիշեր: Մի խումբ փոքրիկ թիւքրեր, որոնք գալիս են հակառակ կողմից, ընդհար-ւում են հայ մանուկների հետ: Վերջիններս ցրիւ են գալիս, բայց սրանցից մէկն ստանում է դանակի մի ծանր հարուած քունքի վրայ: Նա պառկած է գետնին

թէւրքերն անցնում են ծիծաղելով կակ
հայերը յետ եկան շափուած քայլերով,
շփոթուած, բայց նայում են վիրատրին
առանց նրան օգնութեան հասնելու

Եւ մանուկը շարսնակում է ճշալ,
և նրա ճիշն այնքան ցաւալի է: Ես
վար եմ իշնում, մարդկի գլխարկները
հանում են, և ճանապարհ տալիս. Ես
բռնում եմ երեխայի երկու ձեռքից և
քաշ տալիս դեպի հիւապառապան:

Սարովը ինստ զարմացած է, մանաւանդ երբ եկաւ թժիկ Գալեպին Հէքիմեան: Մարդկի զարմացել են, որ հիւպատոսարանի թժիկը կանչւում է մի աղքատ տղայի համար:

Բժիշկը պահանջեց մի բարեխացակամ
մարդ երեխային բռնիլու համար, մինչև
որ ինքը կարէ ծակատը, որի կազուի
մի կտորը կախուել է ինեղ երեխայի
աշքի վրայ, բայց ոչ ոք յանձն չի առ-
նում, ծիծաղում են, ես չեմ կամնում
դժմել Պանայիտափին՝ (իմ յոյն ծառապին),
որ իր պաշտօնից գուրս որեէ բան
անելու և իմաստ անտրամադրի է և սաստիկ
ատում է հայերին: Այն ժամանակ ես
յանձն իմ առնում առանց գաշուելու,
մանաւանդ որ իմ լրջազգեստը արի-
ւով պատաժ է արդէն, սակայն ես
օրիբա չեմ առնում նայել: Ինչ վերաբե-
ռում է երեխային, նա չի էլ ճշում—
ոյս մարդկի ապշեցուցիչ դիմայկունու-
թին ունեն:

Երկու ժամ յետոյ, մեկնելիս, երեսան ցատկուում էր՝ ձեռքին բռնածի արծաթէ դրամ

Օգոստ. 18.—Մեր կեանքը շաբունակում
է լսադալ լինել: Ժանի (իր երեխան) ա-
ռողջութիւնը հիմնալի է, բժիշկը յաճախ
գալիս է մեզ տեսննուու, նորա այցելութիւ-
նը մեզ զպաղեցնում է. Նա լաւ խօսող
է, բայց նորութիւններ չեն բերում. Այն-
պէս քիչ կեանք կայ Սեբաստիայում, մի
հատ օտար հիւպատոս, Մ. Փ. Միաց-
եալ—Նահանգների հիւպատոսը, մի
շատ սիրալիք անձ, որ սակայն միայն
երածշառութիւնից է խօսում, մի բան, որ
այս տեղին պատշաճ չէ: Խնչ վերաբե-

Ըում է հայ ընտանիքներին, նրանցից
մինչև իսկ կրթուածները, խոստովա-
նում եմ, ինձ համբա սակաւ են համա-
կըրելի. Ինչ արծաթասիրութիւն:

Օդոստ. 30. Երեխաս մեծանութէ չարկաւոր կը լինի նրան նոր շորեր ձևել, որպահիտք Քրանսիայից ուղարկուածները շ'ստացուեցին, երեկի ճանապարհին գողացուել են: Ի՞նչ անեմ, շեմ կ ջարող այս փոքրիկ Քրանսիացուն հացդնել թիւքի կամ հայի ձևով, զոզն անտառնելի է: Խոտի մի ծիլ էլ շը կայ, և մեր կովը հիւանդ է:

Սեպտեմբ. 19.—Մէկը մի տագնապպ
ունեցանք: Առաւօտեան ժամի 1-ին, մի
մութ զիշեր, մենք զարթեցինք չների
հաջոցից: Օրովհեակ չների մամուցը
մեծանում էր, Տօրիսը մեր կացաւ, ա-
տրբանանակը լցրեց, և վրանի եղբար բարձ-
րացնելով, առանց աղմուկի դուրս սո-
վաց: Նա շուտով պատահեց Պանա-
յիօտատիին հրացանը ձերքին, որ աշխա-
տում էր խաւարի մէջ բան ջակել:
Կավան ասաց, որ մի քանի րոպէ է,
ինչ նա նշմարում է խաւարի մէջ շա-
ժուն ստուերներ: Նա հնեսել է այս
ստուերներից մէկին, յետոյ կանգ է ա-
ռել, զամանակ ընկել զարանի
մէջ: Տօրիսը և նա գնացին միասին,
եւ մեցի, ինչպէս նրանք հեռանում են,
և սիրտ թթվում էր... նրանց պը-
ոյքան անօգուտ անցաւ և սակայն շը-
սերը չէին հանգստանում:

Այս առաւտած մի հայ հովիւ լայտ-
եց մեղ, որ գիշերը Պանայտուիկին
պահնելու են եկած եղել Մանրա-
մանութիւններ անկարեցի եղաւ իմա-
ալ: Հովիւը չըր համարձակում աւելին
սաել Սրբեած եկողները քրթես, թիւր-
եր, թէ չերքեսներ էին, ով գիտէ:

— Դիտե՞ս սա ինչ է Նշանակում,
սուսմ է ինձ Մօքիլը Դա Նշանակում
որ շուտով Հարդեր են լինելու, և որ
մ Ներկայութիւնը ճնշում է, որպէսին ուն
շանք գիտեն, որ ես մէջ կ'ընկնեմ. իսկ
թէ կրցնսմ Պանայօտտիխ, նրա տե-
ղ ոչ քի դնել չեմ կարստանայ: Լսիք,
աւական է ամարանոցի կեանքը, գը-
անք Սեբաստիա:

27 Օեսլու, Սեբատիա. —Մեր վերապարձը բարի չ'եղաւ. փոթորկի ունեցանք. եկանակը ցուրտ է, Մօրիսը մըրսել է և հազում է:

Սեպտ. 29.—Լաւ եղանակները զեր-
սկութեցին, և մենք խեղդում ենք քա-
ղաքի ախտաբեր փոշու մէջ: Բայց և
այնպէօ՞ լաւ որ այստեղ ենք, պարզ է,
որ մի բան է պատրաստում...

Նալի հայերը շատ լցուած են երկուում:
Նրանք մտածում են ապստամբութիւնան
մասին. մի քան, որ կատաղեցնում է
Մօրիսին, որ երբէք չէ հասկանուած
ապստամբութիւնները, ինքը կարգա-
պահ գիտուուր է:

• • • • • • • • •

Հոկտ. 1.—Եթուզունքն աճում է երկ-
րում, ըսդհարումներ են տեղի ունենում:
Այլին հոսւմ է: Այս ողորմելի հայերը
լիննեցացի են, ինչ է: Իրանը շատ են
ձայները բարձրացնում: Նրանց կօմի-
տէտները գէնքեր ունեն: Բայց նման օպ-
ուութեան վրայ են յու գրել

Այս, ես գիտեմ, նրանք լիշում են
Սիրիայում արած մեր արշաւանքը.
խոստվանում եմ, այստեղ գալուց ա-
ռաջ ես այդ մասին երբեք չեմ լսել.
Նրանք համոզուած են նոյնպէս, որ
Միացեալ-Նահանգները շատ աւելի զօ-
րաւոր են, քան Անգլիան, որը ասենք
ի միջին այլոց, միծամեծ խոստումներ
տալուց յիսոյ՝ նրանց միանգութաման մո-
ւոցել է, և նոյն իսկ Սեբաստիայում
հիւպատոս չ'ունի:

Հոկտ. 3.-Մօքիսը այս առաւօտ
դուրս գնաց և յետ եկաւ խիստ մտա-
քրաղ: Ես չը կարողացաց նրանից մի հատ
խօսք դրու քաշել: Բայց նախաճաշի
ժամանակ նա լանկառծ ասադ.

— Լսիր, փոքրիկս, դու մեկնում ես
վաղը և եթ Փանի հետ.

—Ա, հա... բայց ինչու համար:

— Որովհետեւ քառակի կլու է լինելու,
և իթէ ես կեանքս պարտական եմ
իմ կառավարութեանը, պարտական
շեմ սահայն գոհել իմ կինն ու երիխան:
Ես սկսեի ծիծառին

—Նախ բաները ես այնպէս էլ սկ
չեմ տեսնում ինչքան դու, ասացի, և
մէկ էլ աշխարհում ոչինչ չէ կարող ինձ
քիզանից հեռացնել, եթե դու գտնում
ես, թէ վատանգ կայ:

Մօրիսը յօնքերը կիտեց, բայց էլ չը
պնդեց, միայն պատում էր սեղանի
շուրջը բեները քաշշելով, յետոյ մօ-
տեցաւ համբուրեց ինձ:

Հոկտ. 14. Մօտենում է: Խըրա կոտորում են շրջակալիքի գիւղերում: Ես շտապեցնում եմ Մօրիխին առանց ուշացընելու կազմակերպել մեր պաշտպանութիւնը: Լիւսին (աղախին) և ես տոպրակները լցնում ենք ատազով՝ լուսամուտները փակելու համար: Պանայուտին նշանի տախտակ է գրել պարտիզում և ինձ սովորեցնում է հրացան կրաքել. նրա համար միննոյն է վառողի հոռա առնել, իսկ ես առաջի հարուածներին գլուխս դարձնում եմ, այնպէս որ քիչ էր մնում մի անգամ կրակէլ նրա երեսին: Այժմ ես շատ էլ վատչեմ կրակում:

Նոյեմբեր 5.—Մեզ հասնող լուրերը
հաստատում են, որ հայերը չեն ապրս-
տամբուելի, այլ թուրքերն են կոտո-
րում ու թալանում:

Կարահիսարը, Զարա, Դիվերգի բոցերի մէջ են: Այստեղ կոտորել են՝ բարին, մի քանի հարյւած փարբիկ երեխաներ միայն թողոնած են աւերակների մէջ: Նրանք էլ կը կոտրուին սովից, և թէ պայրի գապաններից տակաւին չեն յօշոտուած: Դժբաղդաբար մենք ոչ ոք այնտեղ ուզարկել չենք կարող Վաստահիլի մարդկի համարում ենք Պանայօտտիին և երկրորդ կավաս Մհամմեդիին. այս վերջինը մի վիթիսարի է, քայլ այնպէս լիման, որ միւսը նուան աէտր է առաջնորդուէ:

Ճակատման մեջ քանակութեամբ պաշար ենք զնում, որովհետև ժամանակ ոչինչ չի մնայ, քանի որ բոլոր խանութիւնները պատկանում են հայերին։ Կացովթիւնը դառնում է անհանգստացուցիչ։ Ամեն գիշեր մենք սպասում ենք հրացանաձღութեան և անօրուն ենու Միան մեռ

աղախինը, Լիսին, շե կորցնում իր հոգու ու խաղաղութիւնը՝ կ զրկնում է ժքպատարվ.

—Ոչ, տիկին, այդ անկարելի է, Սատուած այդ թոյլ չի տար:

Նոյեմբեր 7.—Ես զնացի տեսնելու եղութիւն հայրելին և քարելին, որոնք ընակում են մի հեռաւոր թաղում, վալիլի պալատից հեռու և մահմեղականների թաղից այն կողմը. (այդ երկու միստիօնները մէկը՝ միսից բաւական հեռու են): Ես նրանց ասացի, թէ Մօրիսը լորջուրդ է տալիս պաշար ձեռք բերել և զինուել:

—Մենք զինուենք. օ, ոչ, տիկին, ասաց ինձ գլխաւորը. 8էրն ասել է՝ «Մի սպանից»:

—Բայց ձեզ կ'սպանեն:

—Մենք Սատուծոյ ձեռումն ենք: Քոյրերը աւելի նուազ իւաղալ և աւելի պակաս հնապանդ թւացին, բայց նրանք էլ սիրտ չեն անում զէնիքին ձեռք տար:

Մօրիսը հաղորդում է Պօլիս, թէ բանը փառ է: Յարերազարար մենք հեռագալար ունենք: Մի պաշտօնեալից իմացուեց, որ Դիարբեքիրի հիպատոսը շատ տիսոր լուրեր է ուղարկում, բայց իմ ամուսինը շարունակում է պահպանել իր լաւ տրամադրութիւնը, նրա կարծիքով մինչև ջարդի վճռական հրաման չը գործ գայ, սարսափելու ոչինչ ըլ կայ: Երգեօք ասմամ է բոլորն, ինչ մտածում է. կարծիմ ոչ, որովհետ նա սկսել է ինձ սովորեցնել կարգալ ծածկագիր հնուադիրները:

Նոյեմբեր 10. Ես դիպուածով իմացայ, որ ջարդերն սկսուած են երբուռում: Մօրիսն ինձ չէր ասում:

Նոյեմբեր 11. Մեզ ասացին որ մի հիպատոս քիչ է մնացել սպանուի թուրքերի ձեռքով, նա հեռագրել է գեսպանին իր ծանր կացութիւնը, որի վրայ պ. Կամրոնը ուղեկել է վալիին հետմեալ սպառնալքը. «Եթէ իմ հիպատոսը կորչի, ձեր զիստիր կ'ընկնիս: Այս շատկը ինձ սարսափեցնում է, բայց Մօրիսն ինձ հաւատացնում է, թէ մին-

շկ այժմ դէսքը չէ եղել,» որ հիպատոսարանում փակուած հիպատոսը ըսպանուի, կամ հիպատոսարանը յարձակման ենթարկուի, եթէ մինչև իսկ նրա տունը՝ փախստականներով լի լինի: Պատուութ շուկները ուրեմն լուրջ չեն:

Եմ ժամանակ ես աշխատում եմ նրանից խոսում առնել, որ բաց կ'անէ դուռը միայն հայերի առաջ, իսկ ոչ ինքը՝ ոչ էլ՝ կավանները, ոչնչ էլ որ պատահելու վիճ, զգութ չեն գայ: Մօրիսը տատանում է և յետոյ ինձ տալիս է իսուսափողական պատաժանները:

Գժուար է երևակայել այսպիսի ըսպատողական վիճակի յուզմունքը:

Նոյեմբեր 12.—Աւզիդ կէսօրին ես և Մօրիսը կարդում էինք մի հեռագիր, Ժանը լիազում էր ներքեւի գրասենեակում, բակի վրայ, երբ լուսեց Պանայոտիի շտապ՝ ոտնաձայնը, նա՝ բացեց դուռը, լիւց հրացանը կոչելով՝

—Այս անգամ սկսուած է.

—Խնչը, ասաց Մօրիսը ցատկելով, մինչդեռ ես խեցի երեխան.

—Փողը հնչում է վալիի բնակարանից. համիդիէլ մի բատախօն կրակում է փողցներում, շարժում են դէպի շոկան: Ծհա, լսնւմ էք:

Ես իսկոյն լուսում են ջրագմաթիւ հրացանների ձայներ:

Մօրիս վագում է իր սենեսկը, հազնում է իր համագեստը, լուսում է հրացանը և կանգնում է լուսամուտի առաջ: Նա հրամաններէ տալիս: «Քու, Պանայոտի, իջլը՝ փողոց. գու, Մհամմդէ, զնա դէպի եկեղեցին»:

Ես յանձնում եմ երեխան Լիսիին, որը, շտառվ իր անկողինը բարձրացնում է լուսամուտի առաջ գնդակների դէմ մի պատուաը պատրաստելու համար: Նա մի բառ էլ չի ասում, գլուխը չի կորցնում իմ քաջ հայրենակցուհին. Մօրիսը բարձրանում է տերըստի վրայ: Այստեղից մենք լուս ենք զարհուրեկի հրացանաձգութիւն: Երբեմն լուսում են աւելի խոլ որոտներ. կարծես թնդանոթի ձայն է: Մօրիսը հաւատացնում է, որ զա կանոնաւոր գորքի հրացանաձգութիւն է:

Ամեն կողմից լսուում են յուսահատ ճիշել, խախացներ, ոռնոցներ: Սա տեսում է 20 ըռադէ: Յետոյ ամեն ինչ լրաւմ է:

Տիրուում է մահուան լրութիւն. ամուսինս կրկին գար է իջնում զանգաղութեամբ: Նա կատաղել է այս աւազակների դէմ: Ես նրան աղաշում եմ խաղաղ մնալ:

Իր պատուէրի համաձայն՝ ես վերցնուում եմ ազգամթերքը և տանում եմ ներքել գրասենեակը, ուր գտնուում են զէքերը:

Պանայօտափին պահպանում է փողոցը. Մհամմենը հիւպատոսարանից գընում է եկեղեցի, ուր 2000 քրիստոնեաներ կան փակուած և կրկին յետ է գալիս:

Մենք սստանում ենք հակիրճ լուրեր Պանայօտափից: Ամենքին կոտորել են չուկայում, ոչ մի հայ չէ ապատուել: Մի քանիսը փախել, ծածկաւել են մի ամբարում, բայց օօրը ական է փորել, ներս է մտել, այս փայրկինիս նրանց կոտորում են սուիններով, սրա համար է, որ էլ աղմուկ չի լուսում: Զինուորներն անցնում են փողոցով բեռնաւորուած աւարով, ձեռներն արիստունուած սպաներ գնում են և նրանց հետուում են երկու համամերք:

Ամուսինս ինձ ասում է.

— Ես չեմ կարող այսպէս մնալ առանց իմանալու թէ թոշ եղան մեր հայրենակիցները:

Ցանկարծ նա մտածում է, թէ գուցէ նրանք այլտեղից իրան նշաններ են անում: Նա շուտով բարձրանում տերրասի վրայ, ես նրան հետառում եմ. հեռուում լսում է զնդակների սուլոց: Մենք ոչ մի նշան չենք տեսնուում:

Ցանկարծ Մօրիսն ինձ ասում է. Այ քեզ բան: Ի՞նչ է անում այս մեր դիմացի մտրդը:

Ես նայում եմ, նա ինձ ցոյց է տալիս մեզանից երեսուն մետր հեռու վերնատան հերթիւնց մի հայի զուտի, հրացանը այսին: Չտապագ ինձ մի կողմէ մղում, մի զնդակ անցնում է, մի քիչ ծուլս է դուրս գալիս հերթիւնց:

— Օհ, օհ, սա ինձ համար էր, ասում է Մօրիսը, այ քեզ օյնն!... այդ բանը մենք կը պարզենք յետոյ, իսկ այժմ զինենք ծառաներին. Թիւք զինուորները վերջացրին, նրանք յդիացնան, այժմ ամբոխն է սկսելու:

Ֆուաները դողդողալով մերժում են մեր առաջարկած զէնքերը:

Այս փայրկեանին հասուում է բժիշկ Քարեփինը ինչպէս մի խնմթ, չորերը պատառոտած. Նա փախել է մի խումբ կատաղիների ձեռքից, իր տունը տակն ու վրայ են անում: Հէնց որ նա մեզ մօտ մտաւ, ամեն կողմից հայերը թափուեցին նրա յետկը թանկագին իրեր ձեռներին: Նրանք իրաք հրճում են, ճշում են, ընկնում են:

Ոմանք ներս են մտնում պատերի վրայից, պարտէզը, բակը, ընակարանը լցուում է, ամուսինս դրօշակը սկսվ է ծածկել տալիս, որ նշանակում է, թէ մեծ վտանգ կայ:

— Կեհ, ասում է նա, փրկենք նախ Ս.-ի ընտանիքը:

Մ. Մ. դրազօմանը սիրիացի է, մեծ վտանգ չը կայ նրա համար զուրս գալ, բայց նա գլուխը կորցրել է:

Մհամմենը, մեր երկրորդ կավասը, մի վիթխարի շերքեզ, մենակ է գնում նրա ընտանիքը փնտուելու, իսկ Պանայօտափին մնում է մենակ ուժանպանելու և փողոցը, և եկեղեցին:

Այս փայրկենին՝ բոլորպիլն մեզ մօտիկ լսում է մի բարձր ձիչ. դա մի հայ է, որ փախչում էր և որ խողխողուեց: Ունացող մի խումբ գէպի մեզ է գալիս ճաւոր «գէպի եկեղեցին», գէպի եկեղեցին: Մօրիսն ինձ ասում է. — Կյակիր, բայց օդի մէջ, պէտք չէ սպանել:

Դրսի աղմուկի վրայ մեզ մօտ զլտնուող հայերը բոլորը մէկին աղաղակում են, սարսափած զետին են թափում կամ կծկուում անկիւններում:

Մի կէս ժամ յետոյ Մօրիսն ինձ ասում է.

— Բանը սրանով չի վերջանայ, իսկ մեր Մհամմենն էլ յետ չ'եկաւ. Գոյց նա սպանուած է. մնում է Պանայօ-

տին, Փոյթ չէ, նախ և առաջ մեր հայրենակիցների ապահովութիւնը. ես այժմ Պանայօտանին կ'ուղարկեմ վալին ասելու, որ ես նրան պատուիրում եմ պաշտպանել Գրանսիական միսսիաները:

—Պանայօտանի, կանչում է ամուսինս լուսամուտից: Քաջասիրտ մարդը վագէվազ գտիս է: Մօրիսը նրան հասկացնում է ինչ պէտք է ասել:

—Լաւ, ասում է ծառան առանց տատանուելու. զնում եմ:

—Աշխատիր յետ գալ:

Կալասը հնուանում է.

—Գէն, տիկին Կարլիէ, ասում է Մօրիսը վտանգի առաջ եռամդի եկած, ես ձեղ նշանակում եմ առաջն կազմա: Դուք պիտի պահպանէք հիւպատոսարանի դուռը. իսկ ես վերից կը հսկեմ այն փողացը, որ առանում է զէպի եկեղին:

Ցետոյ նայելով մեզ լսող այս ահագին բազմութեանընան շարունակում է:

—Ի՞նչ ասել եքք այս հնգի հարիւր հոգուց և ոչ մէկը ընդունակ չէ զէնք բռնելու...

Փաստն այն է, որ նրանք մեր առաջ կանգնած հառաչում և լալիս են... Այս վայրկինին ես լսում եմ, ինչպէս Մօրիսը կրակում է: Ես դուրս եմ գալիս դրան առաջ. փողոցը դատարկ է, բացի լոսքից, միւս նեղ փողոցի մօտ: Եւ քանի ամուսինս կըրակում է, ես էլ եմ կրակում հնչն այնպէս: Չուտով մի կատաղի խումբ առաջնում է, բոլոր ուժով նետում են զէպի մեզ կացիների:

Ես սասարի վախեցած՝ յետ եմ քաշում: Կացիները ընկնում են գետին կայծեր արձակելով քարերի վրայ: Ես իրաւում ունեի կարծել, որ ամեն ինչ վերջացաւ... նրանք հեռացան:

—

Մէծ վտանգը անցած է թւում. ահա և Պանայօտանին: Նա զինուորների սուինները հեռացնելով ներս է մտել վալին մօտ և նրա աշքերի մէջ նայելով՝ հրամայել է ֆրանսիական հիւպատոսի կող-

մեց՝ պէտք է տեսնել, թէ նա ինչպէս է արտասանում այս խօսքերը՝ անմիջապէս զինուորները ուղարկել պաշտպանելու միստիկները և դադարեցնել կոտորածքը: Եւ նա յաջողեցը էլ է զիներալը և վալին իրար երես են նայել քարացած. զափթիչներ են գնացել վազէվազ: Տասն բոպէից յետոյ մենք էլ կ'ունենանք մեր պահպանները և նոյն խկ վըջող պահպանները կը հաստատուեն:

—Ժամ լաւ, ասում է Մօրիսը, հիւնալի է: Ահա մի լաւ զգոծ, և որովհետեւ այսօր էլ վտանգ չը կայ, Պանայօտանի, ճանապարհ գիր այս մարդկանց... Ի՞նչպէս շեն մոտածում սրանք, որ թիւրքերն աւելի համարձակօրէն կը կողոպտեն ու կ'այրեն նրանց անտէր մնացած տնկերը:

Հայերը գուրս են զնում հայհոյելով: Աւելի խիւացիները զնում են, որ հիւպատունը լրաւունք ունի, մեր սալօնում մոտը է միայն Գարեգինը, մի քանի պատւաւոր անձննիք, կտնալք և երկու եպիփառուները, մէկը կաթովիկ, միւսը լուսաւորչական:

Սկզն էլ խիստ սոված են: Ես կիւսի հետ խոհանոց եմ զնում կրակ անելու, և մի քառորդ ժամից յետոյ մենք բերում ենք ըլֆշտեկսի պէս մի քան, որից ծխի հոտ է գալիս, Մօրիսը բաց է անում սարգինի մի արկղիկ: Սկզնան ենք նստում, բայց անմիջապէս պայթում է հրացանաձգութիւնը մեղանից մօտիկ: Թիւրքերի խմբեր են, որոնք գալիս են զէպի եկեղեցին զբոհ տալու համար, և Պանայօտանին ցուում է: Երեք անդամ ամուսինս դուրս է զնում փողոց, հրացան արձակում և վերագունում

Վերջապէս գալիս է մի սպայ քըսան և հնանգ զափթիչներով: Բայց այս զինուորները մեզ բնաւ վստահութիւն չեն ներշնչում: Ամուսինն նրանց տուն չէ թողնում մեզ մօտ եղած փախստականների պատճառով: Նա պահանջում է, որ նրանք մնան փողոցի մէջտեղում, մէջքերը դարձրած մեր տանը: Սա նըրանց շատ էլ հաճելի չէ, բայց եզր

Մօրիսը հրամայում է, պէտք է հնա-
զանդուել:

Բայց ինչ եղաւ մեր Մհամմեդը:
Անհանգիստ ենք նրա համար: Մօրիսը
պահանջում է սպայից, որ նա ուղարկէ
երեք մարդ նրան վիճաբեռ և ազատե-
լու, եթէ պաշարուած է:

Վերջապէս ահա և նա Մ. Ս.-ի քր-
րոջ և եղբօր որդիների հետ. նրանք էլ
են սեղան նստում:

—Այս լաւ, Մհամմեդ, ասում է Մօ-
րիսը. դէ հիմայ էլ զնա եկեղեցի և
ընկերացիր այն հայերին, որոնք կը
կամենան վերապանալ տուն: Գնա, գո-
տիդ պնդացրո, հոգիս. տես, ես էլ շեմ
նախաճաշում:

Բարձրահասակ չէրքէզը գնում է:
Մի քանի մուսուլմաններ նրան տեսնե-
լով, դուրս են զալիս մի տնից, առա-
ջարկում են նրան իրանց ընկերանալ
և կօղոպանել:

Նա մերժում է:

Զարումակ լսում են հրացանի ձայ-
ներ աւելի և աւելի հեռուից: Ես տե-
նում եմ, ինչպէս անցնում են մահ-
մեդականներ կողոպաւար շալակած, հը-
րաշալի մետաքսեղններ, ոսկեթել բա-
նուած կտորներ:

Մօրիսը հրամայում է բռնել բոլոր
թալանողներին, որոնք կը համարձա-
կուեն անցնել մեր հիւպատոսարանի
առաջից:

—Թող ինչ ուզում է լինի, բայց
նրանք պարտական են յարգանք տա-
ծել դէպի մեզ:

Երեխոյեան դէմ Պանայօտին իմա-
նում է, որ միսահանների կոօնաւորներն
ու կոօնաւորները ողջ և առողջ են:
Ամբով շարունակում է կողոպուար
մանաւանդ անտէր ձգուած տներում:
Այս ամբովը կատարել է գազանու-
թիմներ: Ձէք շանենալով նրանք կո-
տորել են իրանց զոհերին մահակներով,
երկաթէ ձողերով, կամ փշել են նը-
րանց գումարները քարերի տակ կամ
խեղճել առուի մէջ նրանց սարսափած
կանանց և զաւակների աշքի տառձ:
Զատ հայեր այսպէս կոտորուել են ա-

ռանց պաշապանութեան փորձ անելու:
Նրանց մերկացնում և սարսափելի կեր-
պով խոշանկում էին սպանելուց ա-
ռաջ:

Ես իմանում եմ, որ ժամի 6-ին մուէդ-
զիները մինարէների կատարներից շը-
նորհաւորել են ժողովրդին լաւ կտո-
րածի համար:

Նյիեմբերը 13.—Խաղաղ օր է սկս-
ում, թէկ մի քանի հրացանի ձայներ
են լսում մէջընդմէջ: Մօտ 1200
մարդ է սպանուած, բայց 5000-ից ա-
մելի մնացել են ողջ առողջ, մեր շուր-
ջը եղած թաղերը ազատ են: Պանայօտ-
տին տեսնելով որ եպիսկոպոսնե-
րըն ու իրանց հետևորները մեզ վրայ
թափուած են մնում, նրանց խորհուրդ
է տալիս զնալ: Նրանք էլ մեկնում
են...

Ամուսինս ինձ յայտնում է, թէ իր
երկու կափաների հետ զնում է այցե-
լիր կոօնաւորներին: Սասցին, որ նր-
անք պատուած են, բայց նա կամե-
նում է իր աշքով տեսնել: Նա իր զքա-
գօման Մ. Ս.-ին պատուիրում է զինուել.
Բայց սա սարսափած աղերսում է նրան
գումար չը զնալ: Ամուսինս զարմանքով
ուսերը բարձրացնում է:

—Մի վախենաք, պարոն. կինս ձեզ
կը պաշտպանէ:

Թժշկ Գարեգինն էլ կողըրել է
սամանաբութիւնը, բայց նա զնէ գի-
տէ, որ իր գումար զնահատուած է:
Ինչ որ ինձ ապշեցնում է, դա այս
մարդկանց սարսափն է հրազնների
առաջ:

Մօրիսի բացակայութեան բոլոր ըն-
թագրում ես մնում եմ վերի լուսամուտի
մօտ և հակում եմ զինուորների վրայ:
Անցնում է վալին, լաւ շըջապատուած-
թիկնապահներով, նա ժպտալով ինձ
բարենում է ձեռքի նշանով, իսկ իր ըս-
պաները՝ սրով.

—Այդ ինչպէս համաձայնեցիք տի-
կին, ասում է նա, որ հիւպատոսը հե-
ռանայ, ուրեմն գուք էլ էք զանում, որ
իմ թիւգերը վտանգաւոր չեն:

—Եյո՛ պատասխանում եմ ես ցոյց

տալով ատրճնակս, երբ մարդ սրա-
նից ունի, գտանգաւոր չեն:

Վալին էլ չէ ժպտում. նա հեռա-
նում է հաւատացնելով ինձ, թէ նա
գնում է քաղաքում կարգ հաստատելու:

Ամուսինն գերազանում է: Գուրս
է գալիս, որ գեր կոտորածը շարունակ-
ում է, միայն հեռաւոր ագարակնե-
րում: Միսսիաները չեն աւերուել, բայց
դրաները ծակուուել են գնդակներից և
կացինների հարուածներից: Քոյրերը
ժողովել են շատ երեխաներ, իսկ հայ-
րերը աղամարդիկ:

Սյո վայրկենին ամուսինս տեսնում
է ուշացած կողոպտողներից մէկին, որ
անցնում է սիգարը բերանին և յախոր-
տակով մեղ է նայում.

— Թռնեցք այս թշուառականին.

Հրամայում է ամուսինս:

Զինուորը տեղից չէ շարժում: Մօ-
րիսը ցատկում է և իր ատրճնանակի
փողը նրա ճակատին բռնում: Այն ժա-
մանակ զինուորը հայհոյելով բռնում է
աւարակին և տանում է վայրի մօտ
Մօրիմն ասում է միւսներին, թէ նը-
րանք պիտի օգտուեն այս գասից, բայց
մի հաստավիզ նրան պասամանում է:

— Սա զրուելի է, բոլոր մեր ընկեր-
ները համստացան, մինչդեռ մենք ո-
չինչ չը շահուեցինք: Գուք մեղ վընա-
սում էք:

Կատաղի զէմքով մի ուրիշ զինուոր
ասում է ատամների արանքից:

— Այն խարոյիք, որ ձեր Գարեգի-
նին պիտի այրէ, բոլորովին պատ-
րաստ է:

Ի՞նչ անել:

(Կը շարունակուի)

ԲԱԶԱՐՄԱԿԵԼՊ. Յունուար. «Գերմա-
նական աղբեցութեան վրայ» վերնա-
գըրի տակ Բազմավէպի այս տարրուայ
տուաշին համարսմ տպուած է մի ու-
շագրաւ յօդուած:

Գերմանական Ալիհելմ Բ. կայսըր
մի անգամ ասել է, թէ գերմանական
հանճարը գերադաս է բոլոր աղքերի

մէջ: Գրանսիացի գրող Ժակ-Մորիան
այս պարծենկոտ յայտարարութեան
անհետիթութիւնը ցոյց տալու հա-
մար՝ մի քանի հարցերով գիտում է մի
շաբթ գրանսիացի և օտար նշանաւոր
անձանց՝ նրանց կարծիքն իմանա-
լու գերմանական մտքի ազգեցութեան
մասին: Պատասխանները շատ են և
հետաքրքիր: Բայց մեր կարծիքով
ամենահետաքրքիրը Տուրինի հոչա-
կաւոր ուսուցչապետ Զեղարէ Լոմբրո-
զոյի կարծիքն է, որ քաղում ենք
Բազմավէպից:

«Թերեւս հիմա Ընդդիա Գերմանիայէ
աւելի հանճարաւոր իմաստասէրներ և
գիտնականներ ունենայ, մանաւանդ
թէ Միացեալնահանգք սկսան Ընդ-
դիոյ տեղն անցնիլ:

Բայց ինչ որ ալ ըլլայ, ես անոնց-
մէ եմ, որ կ'ընդունեն և չեն մերժիր
օտար ազգեցութիւնները: Պասն զի
գիտութիւնը քաղաքական պատեր չ'ու-
նի, եթէ ազգ մը ինքզինք սկսի ու-
րիշներէն վեր գնել, երթալով կ'իյ-
նայ, որովհետև չ'օգտաւիր ուրիշնե-
րէն: Ազգ մը արհամարենով օտար ազ-
գեցութիւններն ու չ'ընդունելով օ-
տար գիտերը, կը վնասէ նոյնիսկ իւր
գիտերուն և կ'իյնայ հիւծման մէջ:
Ներկայիս Գերմանիա այդ վտանգին
մէջ է: Իր ներկայ մեծութեամբ և ամ-
բարհամանութեամբ շափականց կ'ար-
համարնէ ուրիշ աղդաց արդիւրը:

Ինքնըստինքեան մեր կեանքի հետ
ոչ մի առընչութիւն չ'ունեցող այս
խնդիրը առիթ է տուել Բազմավէպին
մի զուտ աղզային-գրական հարց զար-
թեցնելունացանկանում է իմանալ թէ՝

1) Ներկայիս գերմանական մա-
տենագրութիւնն է, որ ունի աւելի
ազգեցութիւն հայ ազգին վրայ, թէ՝
գաղլիականը.

2) Ո՞րը կընայ օգտակար հա-
մարուիլ մեր ազգին ապագայ յա-
ռաջադիմութեան համար, միշտ ի
նկատի առնելով անոր արդի կա-
ցութիւնը:

«Եօ չեմ ուզեր և չեմ ալ կարող
միիլ այս հարցմանց պատասխաննե-

րուն մէջ—շարունակում է Բազմավիճպի յօդուածագիր Հ. Մ. Նուրիխան—միայն կը համարձակիմ համառօտիւ հաստատել, ինչ որ էր անցեալն, և կամ ինչ որ է ներկայանք:

Մի համառօտ տեսութեամբ յօդուածագիր Հ. Մ. Նուրիխան գալիս է այն եղրակացութեան, թէ ուստահայերը՝ գերմանական և թիւրքահայերը փրանսիական ազգեցութեան ներքոյն են. այս կարծիքը ճշգրիտ է, բայց ընաւ նորութիւն չէ. վաղուց է, որ երբ հարց է ծագում հայ ժողովրդի երկու մեծ հատուածների մտաւորականի և գրական ուղղութեան մասին, մէջ է բերում նոյն կարծիքը:

Մասնաւորապէս մեզ համար աւելի ուշագրաւ պիտի լինէր Հ. Նուրիխանի յօդուածը, եթէ նա ծանրանար թիւրքահայ և ուստահայ գրականութիւնների ուրոյն-ուրոյն դոյն տուող այլ գործոնների վրայ:

Յայտնի է, որ թիւրքահայ գրականութիւնը իր Մաթիլդներով, Ֆօգէֆիններով, Փանթիններով Պօլսոյ գրականութիւն եղաւ, կտրուած գաւառներից, հայ ժողովրդի ամբողջութիւնց. մինչդեռ ուստահայ գրականութիւնը հէնց սկզբից բուն ժողովրդական կնիք կրեց, ծնուց ժողովրդից և մոնուն առաւ համարեարացաւապէս ժողովրդական ոգուց: Երկու գրականութիւնների այս խոշոր տարրերութիւնը գերագրելի՞ է արդեօք ամբողջապէս մէկի Փրանսիական և միւսի գերմանական ազգեցութիւն կրելուն, թէ կան և այլ խորոնի պատճառաներ, որոնք պահնական մշտերի իրարեց տարրերը ուղղութեան մէջ:

Անշուշտ կան և այլ հանդամանքներ. այստեղ նպատակ չունենք ծանրանալ այս հարցի մանրամասնութիւնների վրայ, կ'ասենք սակայն, որ նորագոյն գրական անդաստանի առաջին մշակները բացառապէս ժողովրդից ծնուած և ժողովրդի մէջ ապրած մարդիկ եղան. Սրովհան, Իափ-

ի, Պոչեան, Աղայեան ամենքն էլ գիւղից առաջ եկան և ժողովրդի լայն, բեղմաւոր ոգու երկունքի պըտուղներ եղան: Դա մի գերին աստիճանի խոչոր հանգամանք է ուսւահայ գրականութիւնը բնորոշելու համար:

Դիւղի, ժողովրդի, նրա յաւերի զպրոցն այնքան կրթիչ է, ոյնպէս ուժեղ մղումն է տալիս բնաւորութիւններին, որ ապագայ հանգամանքները մեծաւ մասամբ անկարող են դառնում այլ ուղղութիւն տալ նրանց. մեզ անհընարին է թւում կարծել, թէ գիւղացի Սրովհանը եթէ քրանսիական գաստիտարակութիւն ստանեար, պէտք է աշքաթող անէր ժողովրդական կեանքը, որ մենք «Վէրք Հայստանի» ժողովրդական վէպը չէինք ունենալ: 2որս-հինգ տարուայ օտար կեանքը չէ կարող չնչել մի քանի տասնեակ տարիներ տպաւորուած պատկերները շիտակ, զգայուն հոգիններում:

Բազմավիճպի հէնց միևնուն համարում Խ. Սրովհանի ինստագրականի մէջ Հ. 2րաքեան պ. 2օպաննեանի հետ իրաւացի կերպով ասումէ, «հինգ տարուան ներովական կեանքէ և համարանական ուսումնասիրութիւններէ յետոյ Սրովհան իր վէպին մէջ կը ման գեղջուկ մլ»: Մեր կարծիքով Սրովհան կը մնար նոյն գեղջուկը, եթէ այլ հինգ տարին Քրանսիայում անցրած լինէր:

Եղապէս չ'սկսուեց թիւրքահայ արդի գրականութիւնը. Նա ծնաւ Պօլսում, այսինքն ներովայում, մինչդեռ բուն ժողովուրդը մնաց Սսիայում. բաժանող ահագին տարածութիւնը արուեստական հեշտութիւններ էլ շը տուց յարաբնութեանը. գաւառները մոռացուցին, և ժողովուրդը գուրս մնաց Պօլսի գրականութիւնից: Հետաքրիքը է, արդեօք Պօլսն աւելի՞ պիտի ուշք զարձնէր զաւառական կեանքի վրայ, եթե նա հրաշքով գերմանական ազգեցութիւն կը ած լինէր: 2ենք կարծում: Պօլսի զիրքը այստեղ բացառաթիւնների տեղ չէ թողնում: Ինչպէս երկում է, զիրքերս թիւր-

քահայերի մէջ սկսուել է մի գրական շարժում, որ դուռ ժողովրդական ըընդունի ունի Անշուշա զա մի վերին աստիճանի ուրախալի երևոյթ է, ասկայն այժմն իսկ կարելի է ասել, որ այդ շարժումը յաջողութիւն կ'ունենայ շաբախն երկու դէպքում—կամ զաւաները պէտք է հնարաւորութիւն ունենան իրանց ինքնուրայն գրականութիւնն ստեղծելու, կամ Պօլիսը նիւթական յարմարութիւններ պիտի ունենայ աւելի սերտ, աւելի մօտիկ յարաբորութեան մէջ մտնելու զաւառական ժողովրդի հետ: Եթէ Պօլիսը թիւրքահայերի զլուխն է, զաւառները սիրոն են կազմում. որքան ժամանակ որ սրանք անջատուած մնան, գրականութիւնը կը լինի թերի, անկատար:

Ի դէպ է ասել, որ «Մուրմի» ներկայ համարում միր աշխատակից պառանձար ի միջի այլոց խօսելով թիւրքահայերի մէջ սկսած այդ ժողովրդական գրական շարժման մասին՝ այն կարծիքն է յայտնում, թէ ոռոսահայերը բաւականաչափ լուրջ ուշադրութեան չեն առնում այդ նշանաւոր երեսոյթը:

Փէտք է նկատենք պ. Առանձարին, որ այդ գրական շարժումը ուստահայերի համար թէն շատ ուրախալի, շատ միտիքարական երևոյթ է, բայց զարմանք, հիացմունք շարժելոց շատ հեռու է, որովհետև մեզ համար զա մի ծանօթ, համարեա անցնող մտաւոր

շրջան է: Այն, ինչ թիւրքահայերն այժմ են սկսում, այսինքն ժողովրդական կեանքի ուսումնասիրութիւնը, ուստահայ գրական գործիչներն անում են սկսած անցեալ դարի կիսից: Թիկատենցիներ, Զարդարեաններ, Գեղամներ մենք ունեցել ենք և ունենք նաև այժմ, ահա թէ ինչու որանց գրական գործունէութիւնը մեզ համար մի նոր երևոյթ չէ համարում: Պ. Առանձարի հիացմունքը իրեկ թիւրքահայի, հասկանալի է, նոյնափ հասկանալի պիտի լինի նաև մեր ուստահայերիս նուազ ոգնորութիւնն այս երեսոյթով:

Պօլսական և զաւառական հայ միտքն ի մի ձուլելու համար՝ ինչպէս ասացինք, պակասում են նիւթական հանգամանքներ. օտար գրական աղդեցութիւնները այդ միացուած մըտքին այս կամ այն ուղղութիւնը տալ կարող էին, բայց նրանց իրարից անշատել երբէք չեն կարող:

Ահա թէ ինչու մենք զանում ենք թիւրքահայերի մէջ սկսած գրական շարժումը խիստ ուրախալի, բայց նրա յարատեռութիւնը և արդինքը կարծում ենք կախուած է միծաւ մասմբ քաղաքական պայմանների հընարաւոր և մօտիկ փոփոխութիւնից: Այլապէս այդ շարժումն էլ նոյն վախճանը կ'ունենայ, ինչ վախճան ունեցաւ Խըմեանի ձեռքով սկսածը Վանում և Վարագում: